ՆԱԽԱԳԻԾ
(ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ)
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Կ-041-06.03.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել նոր3.1-րդ մասով.
«3.1 Դուստր և կախյալ ընկերություններն իրավունք չունեն գնելու հիմնական ընկերության թողարկած բաժնետոմսերը:»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ՝

1) հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության «տեսակի» բառը հանել,

2) հոդվածը լրացնել նոր 5.1-րդ մասով.

«5.1 Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերի դասերով նախատեսված իրավունքների սահմանափակմանը վերաբերող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել այդ բաժնետոմսերի սեփականատերերը կամ անվանատերերը: Ընդ որում, իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ այդ որոշմանը կողմ են

քվեարկել համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը, եթե Ընկերության կանոնադրությամբ սեփականատերերի կամ անվանատերերի առավել մեծ թիվ սահմանված չէ:

Սույն մասի իմաստով իրավունքների սահմանափակում են համարվում արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների (շահութաբաժինների) նվազեցումը, հաշվարկման և (կամ) վճարման կարգի փոփոխությունները:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել նոր «38.1» հոդվածով.

«Հոդված 38.1. Բաժնետիրական համաձայնագիր

1. Բաժնետիրական համաձայնագիրը բաժնետոմսերով հավաստվող իրավունքների իրականացման և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին պայմանագիր է: Բաժնետիրական համաձայնագրով կողմերը պարտավորվում են որոշակի ձևով իրականացնել բաժնետոմսերով հավաստվող իրավունքները և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքները կամ ձեռնպահ մնալ այդ իրավունքների իրականացումից: Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել բաժնետերերի ընդհանուր ժողովում համաձայնագրով սահմանված ձևով քվեարկելու, քվեարկության կարգը կամ քվեարկությունը այլ անձանց հետ համաձայնեցնելու, այլ անձանց ցուցումներով քվեարկելու, բաժնետոմսերը նախապես սահմանված գնով և (կամ) պայմանագրով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ձեռք բերելու և(կամ) օտարելու, մինչև պայմանագրով հանգամանքների ի հայտ գալը բաժնետոմսերի օտարումից ձեռնպահ մնալու, ինչպես նաև բաժնետիրական Ընկերության կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված այլ համաձայնեցված գործողություններ իրականացնելու պարտավորությունը: Ընկերության ժողովում որոշումների ընդունման համար բավարար ձայների՝ սույն օրենքով կամ սույն օրենքի հիման վրա կանոնադրությամբ նախատեսված քանակը չի կարող փոփոխվել Բաժնետիրական համաձայնագրով:

2. Բաժնետիրական համաձայնագիրը կնքվում է գրավոր: Բաժնետիրական համաձայնագրի կողմ կարող են լինել Ընկերությունը, բաժնետերերը, ինչպես նաև այն անձինք, որոնք բաժանորդագրվում են Ընկերության բաժնետոմսերին: Եթե Ընկերությունը հանդիսանում է բաժնետիրական համաձայնագրի կողմ, ապա այդպիսի բաժնետիրական համաձայնագրի կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի IX գլխի դրույթները:

3. Բաժնետիրական համաձայնագրի առարկա չի կարող լինել Ընկերության խորհրդի կամ գործադիր մարմնի ցուցումների համաձայն բաժնետիրական համաձայնագրի կողմերի քվեարկելու պարտավորությունը:

4. Բաժնետիրական համաձայնագիրը պարտադիր է միայն համաձայնագրի կողմերի համար:

5. Բաժնետիրական համաձայնագրի խախտումը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն անվավեր ճանաչելու համար, եթե ապացուցվում է, որ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն ընդունվել են ֆիդուցիար պարտականությունների խախտմամբ:

6. Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել դրանից բխող պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև դրանով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ:»:

Հոդված 4. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Բաց ընկերության ժողովն իրավունք ունի որոշել չկիրառելու (կասեցնելու) քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի սույն հոդվածի 1-ին մասում նշված նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանել այդ որոշման գործողության ժամկետը, եթե քվեարկող բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով և տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով:

3. Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը դադարում է, եթե մինչև դրա ավարտվելը Ընկերության բոլոր բաժնետերերից ստացվել է նախապատվության իրավունքից օգտվելու կամ օգտվելուց հրաժարվելու վերաբերյալ գրավոր ծանուցում:»:

Հոդված 5. Օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր նախադասություն.
«Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 64-րդ հոդվածի՝
1) 2-րդ մասի 2-րդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:
2) 3-րդ մասի ա) կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.»:

Հոդված 7. Օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մասի 2-րդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության «15» թիվը փոխարինել «21» թվով:

Հոդված 9. Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «ժ1» կետ.
«ժ1) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.»:

Հոդված 10. Օրենքի 85-րդ հոդվածի 5-րդ մասը 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով.

«Բաց ընկերություններում խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում է մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, ով՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ,

բ) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրությունը,

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն ընկերության և (կամ) ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ,

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող,

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել ընկերության խորհրդի անդամ,

զ) չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր,

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող,

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի «գ» պարբերության իմաստով նշանակալից է համարվում ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:»:

Հոդված 11. Օրենքը լրացնել նոր 87.1-րդ հոդվածով.

«**Հոդված 87.1 Բաց ընկերություններում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը**

1. Բաց ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով:

2. Բաց ընկերությունում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:

3. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, ով ներգրավված է ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

4. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

5.Աուդիտի հանձնաժողովը իրականացնում է.

ա) Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).

բ) Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և խորհրդին առաջարկությունների ներկայացում դրանց հաստատման վերաբերյալ.

գ) Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.

դ) Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ խորհրդին առաջարկությունների ներկայացում.

ե) Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.

զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում արտաքին աուդիտորի հետ.

է) Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվության տրամադրում խորհրդին.

ը) Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը հետևում.

թ) Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և դրանց ներդրմանը հետևում:

Ընկերության կանոնադրությամբ կամ ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել աուդիտի հանձնաժողովի այլ իրավասություններ:»:

Հոդված 12. Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «հնարավոր բախումներից» բառերից հետո լրացնել «(ֆիդուցիար պարտականություն)» բառերը:

Հոդված 13. Օրենքի 93-րդ հոդվածի 1.1-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.1 Եթե շահագրգռվածության առկայությամբ գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին, ապա անկախ գնահատողը մինչև գործարքի կնքման որոշումն ընդունելը, տալիս է եզրակացություն գործարքի՝ շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:»:

Հոդված 14. Օրենքի 96-րդ հոդվածի 1.1-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.1 Բաց Ընկերությունը պարտավոր է սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետով սահմանված շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը

տրամադրել Ընկերության բոլոր բաժնետերերին կամ գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում, եթե Ընկերությունը չունի իր պաշտոնական ինտերնետային կայքը:»:

Հոդված 15. Սույն օրենքի 5-րդ հոդվածի դրույթը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո շահութաբաժինների վճարման մասին ընդունված որոշումների վրա:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ԵՎ «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

Սույն օրենքների ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շարունակականության ապահովման, մասնավորապես՝ փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Փոքր բաժնետերերի և փայատերերի պաշտպանության ոլորտում ներկայումս կարգավորված չեն հետևյալ հարաբերությունները.

1) Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերով նախատեսված իրավունքների սահմանափակման հետ կապված,

2) Տարեկան և միջանկյալ շահութաբաժինների վճարման հետ կապված՝ մասնավորապես դրանց վճարման առավելագույն ժամկետը,

3) Բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետ կապված՝ մասնավորապես դրանում ներառվող անկախ անդամների պարտադիր առկայությունը և դրանց նվազագույն թիվը,

Միաժամանակ, ներկայումս՝

- ընկերության շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարքի կնքման դեպքում գործարքի՝ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի կամ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողը) եզրակացություն տալու պարտադիր պահանջը սահմանված է միայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով խոշոր ընկերությունների համար:
- բացակայում է բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի ձևավորման պարտադիր պահանջը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Փոքր բաժնետերերի պաշտպանությանը ուղղված կարգավորումների կատարելագործում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագիծը մշակվել է փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունն ապահովելու և դրա արդյունքում նաև Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «փոքր բաժնետերերի շահերի պաշտպանություն» ցուցիչի մասով Հայաստանի դիրքի առաջընթացը ապահովելու նպատակով:

Նախագծով, ի թիվս այլ դրույթների, սահմանվում է, որ.

- Դուստր և կախյալ ընկերություններն իրավունք չունեն գնելու հիմնական ընկերության թողարկած բաժնետոմսերը,
- Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերով նախատեսված իրավունքների սահմանափակմանը վերաբերող հարցերի քննարկմանը կարող են

մասնակցել այդ բաժնետոմսերի սեփականատերերը: Ընդ որում, իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ այդ որոշմանը կողմ են քվեարկել նման արտոնյալ բաժնետոմսերի 3/4-ի սեփականատերերը,

- Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում,
- Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ,
- Եթե շահագրգռվածության առկայությամբ գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար են կամ գերազանցում են Ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը, անկախ գնահատողը մինչև գործարքի կնքման որոշումն ընդունելը տալիս է եզրակացություն գործարքի՝ շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ,
- Բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի ձևավորման պարտադիր պահանջը:

Միաժամանակ՝ ներդրվում է բաժնետիրական համաձայնագրի գաղափարը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Նախագծով ակնկալվում է ապահովել փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունը և դրա արդյունքում՝ Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի «փոքր բաժնետերերի շահերի պաշտպանություն» ցուցիչի մասով Հայաստանի դիրքի առաջընթացը:

7. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը**.

Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը բացակայում է:

2. **Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.**

Համապատասխանում է:

3. **Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)**

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունմամբ ՀՀ պետական բյուջեի (կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեի) ծախսերի կամ եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ակնկալվում:

ՆԱԽԱԳԻԾ

(ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ)

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր3.1-րդ մասով.

«3.1 Դուստր և կախյալ ընկերություններն իրավունք չունեն գնելու հիմնական ընկերության թողարկած բաժնետոմսերը:»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ՝

1) հոդվածի 1-ին մասի~~ց~~ 1-ին պարբերության ~~հանել~~ «տեսակի» բառը հանել~~:~~,

2) հոդվածը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 5.1-րդ մասով.

«5.1 Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերի դասերով նախատեսված իրավունքների սահմանափակմանը վերաբերող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել այդ բաժնետոմսերի սեփականատերերը կամ անվանատերերը: Ընդ որում, իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ այդ որոշմանը կողմ են

Formatted: Armenian (Armenia)

քվեարկել համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը, եթե Ընկերության կանոնադրությամբ սեփականատերերի կամ անվանատերերի առավել մեծ թիվ սահմանված չէ:

Սույն մասի իմաստով իրավունքների սահմանափակում են համարվում արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների (շահութաբաժինների) նվազեցումը, հաշվարկման և (կամ) վճարման կարգի փոփոխությունները:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~նոր «38.1» հոդվածով.

«Հոդված 38.1. Բաժնետիրական համաձայնագիր

7. Բաժնետիրական համաձայնագիրը բաժնետոմսերով հավաստվող իրավունքների իրականացման և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին պայմանագիր է: Բաժնետիրական համաձայնագրով կողմերը պարտավորվում են որոշակի ձևով իրականացնել բաժնետոմսերով հավաստվող իրավունքները և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքները կամ ձեռնպահ մնալ այդ իրավունքների իրականացումից: Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել բաժնետերերի ընդհանուր ժողովում համաձայնագրով սահմանված ձևով քվեարկելու, քվեարկության կարգը կամ քվեարկությունը այլ անձանց հետ համաձայնեցնելու, այլ անձանց ցուցումներով քվեարկելու, բաժնետոմսերը նախապես սահմանված գնով և (կամ) պայմանագրով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ձեռք բերելու և(կամ) օտարելու, մինչև պայմանագրով հանգամանքների ի հայտ գալը բաժնետոմսերի օտարումից ձեռնպահ մնալու, ինչպես նաև բաժնետիրական Ընկերության կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված այլ համաձայնեցված գործողություններ իրականացնելու պարտավորությունը: Ընկերության ժողովում որոշումների ընդունման համար բավարար ձայների՝ սույն

օրենքով կամ սույն օրենքի հիման վրա կանոնադրությամբ նախատեսված քանակը չի կարող փոփոխվել Բաժնետիրական համաձայնագրով:

8. Բաժնետիրական համաձայնագիրը կնքվում է գրավոր: Բաժնետիրական համաձայնագրի կողմ կարող են լինել Ընկերությունը, բաժնետերերը, ինչպես նաև այն անձինք, որոնք բաժանորդագրվում են Ընկերության բաժնետոմսերին: Եթե Ընկերությունը հանդիսանում է բաժնետիրական համաձայնագրի կողմ, ապա այդպիսի բաժնետիրական համաձայնագրի կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի IX գլխի դրույթները:

9. Բաժնետիրական համաձայնագրի առարկա չի կարող լինել Ընկերության խորհրդի կամ գործադիր մարմնի ցուցումների համաձայն բաժնետիրական համաձայնագրի կողմերի քվեարկելու պարտավորությունը:

Բաժնետիրական համաձայնագիրը պարտադիր է միայն համաձայնագրի կողմերի համար: ~~Բաժնետիրական համաձայնագրի խախտմամբ կնքված գործարքը կարող է շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա դատարանի կողմից ճանաչվել անվավեր միայն այն դեպքում, երբ ապացուցվի, որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ պետք է իմանար կարող էր իմանալ բաժնետիրական համաձայնագրով նախատեսված սահմանափակումների մասին:~~

10. Բաժնետիրական համաձայնագրի խախտումը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն անվավեր ճանաչելու համար, եթե ապացուցվում է, որ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն ընդունվել են ֆիդուցիար պարտականությունների խախտմամբ:

11. Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել դրանից բխող պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև դրանով

նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ:»:

Հոդված 4. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.

«2. Բաց ընկերության ժողովն իրավունք ունի որոշել չկիրառելու (կասեցնելու) քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի սույն հոդվածի 1-ին մասում նշված նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանել այդ որոշման գործողության ժամկետը, եթե քվեարկող բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով և տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով:

3. Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը դադարում է, եթե մինչև դրա ավարտվելը Ընկերության բոլոր բաժնետերերից ստացվել է նախապատվության իրավունքից օգտվելու կամ օգտվելուց հրաժարվելու վերաբերյալ գրավոր ծանուցում:»:

Հոդված 5. Օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր նախադասություն ~~հետևյալ բովանդակությամբ~~.

«Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 64-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:

2) 3-րդ մասի ա) կետը շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.

«ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով

հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.»:

Հոդված 7. Օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մասի 2-րդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ ~~մասում~~ մասի 2-րդ պարբերության «15» թիվը փոխարինել «21» թվով:

Հոդված 9. Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին– մասում լրացնել նոր «ժ1» կետ ~~հետևյալ բովանդակությամբ~~.

«ժ1) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.»:

Հոդված 10. Օրենքի 85-րդ հոդվածի 5-րդ մասը 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով՝ ~~հետևյալ բովանդակությամբ~~.

«Բաց ընկերություններում խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում է մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, ով՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ,

բ) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի

ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրությունը,

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն ընկերության և (կամ) ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ,

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող,

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել ընկերության խորհրդի անդամ,

զ) չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր,

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող,

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի «գբ» պարբերության իմաստով նշանակալից է համարվում ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:»:

Հոդված 11. Օրենքը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր 87.1-րդ հոդվածով.

«Հոդված 87.1 Բաց ընկերություններում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը

Formatted: Indent: First line: 0.5"

5. Բաց ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով:

6. Բաց ընկերությունում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:

7. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, ով ներգրավված է ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

~~Աուդիտի հանձնաժողովի անդամները պետք է ունենան ընկերության գործունեության ոլորտին առնչվող մասնագիտական գիտելիքներ: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է գիտելիքներ ունենա հաշվապահական հաշվառման, աուդիտի և ռիսկերի կառավարման բնագավառում:~~

8. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

~~6~~5.Աուդիտի հանձնաժողովը իրականացնում է.

ա) Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).

բ) Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և խորհրդին առաջարկությունների ներկայացում դրանց հաստատման վերաբերյալ.

գ) Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.

դ) Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ խորհրդին առաջարկությունների ներկայացում.

ե) Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.

զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում արտաքին աուդիտորի հետ.

է) Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվության տրամադրում խորհրդին.

ը) Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը հետևում.

թ) Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և դրանց ներդրմանը հետևում:

Ընկերության կանոնադրությամբ կամ ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել աուդիտի հանձնաժողովի այլ իրավասություններ:»:

Հոդված 12. Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «հնարավոր բախումներից» բառերից հետո լրացնել «(ֆիդուցիար պարտականություն)» բառերը:

Հոդված 13. Օրենքի 93-րդ հոդվածի 1.1-րդ մասը շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.

«1.1 Եթե շահագրգռվածության առկայությամբ գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին, ապա անկախ գնահատողը մինչև գործարքի կնքման որոշումն ընդունելը, տալիս է եզրակացություն գործարքի՝ շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:»:

Հոդված 14. Օրենքի 96-րդ հոդվածի 1.1-րդ մասը շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.

«1.1 Բաց Ընկերությունը պարտավոր է սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետով սահմանված շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը տրամադրել Ընկերության բոլոր բաժնետերերին կամ գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում, եթե Ընկերությունը չունի իր պաշտոնական ինտերնետային կայք:»:

Հոդված 15. Սույն օրենքի 5-րդ հոդվածի դրույթը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո շահութաբաժինների վճարման մասին ընդունված որոշումների վրա:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը օրվանից, բացառությամբ սույն օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից հաջորդող 6-րդ ամիսը հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

<<ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (փաստաթղթային կոդ՝ Կ-041-06.03.2019-ՏՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդված	«պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 6-րդ ամիսը» բառերն առաջարկում ենք փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.		««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագիր և 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկում ենք հանել, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը և 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույնը վերաբերում է Փաթեթում ներառված ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերնագրերին և 1-ին հոդվածներին:		
3.		Նախագծի 1-ին հոդված, 2-րդ հոդվածի 2-րդ կետ, 3-րդ և 11-րդ հոդվածներ	«հետևյալ բովանդակությամբ» բառերն առաջարկում ենք փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.		Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետ, Նախագծի 8-րդ հոդված, Նախագծի 10-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որի համաձայն հղումները կատարվում են հստակ և ուղղակի, առաջարկում ենք	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «1) հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության «տեսակի» բառը հանել,», Նախագծի 8-րդ հոդվածի «2-րդ մասում» բառերը փոխարինել «2-րդ մասի երկրորդ պարբերության», իսկ Նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 85-րդ հոդվածի չորրորդ պարբերության «Սույն մասի» բառերը՝ «Սույն մասի երրորդ պարբերության» բառերով:		
5.		Նախագծի 4-րդ հոդված, 6-րդ հոդվածի 2-րդ կետ, 13-րդ և 14-րդ հոդվածներ	Նախագծի 4-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 2-րդ կետի, 13-րդ և 14-րդ հոդվածների «հետևյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված:	խմբագրությամբ» բառերն առաջարկում ենք փոխարինել «նոր խմբագրությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը: Նույնը վերաբերում է Փաթեթում ներառված ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածին և ««Արժեթղթերի շուկայի		

			մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետին:		
6.		Նախագծի 5-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներ	Նախագծի 5-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների «հետևյալ բովանդակությամբ» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.		Նախագծի 11-րդ հոդված	Առաջարկվում է հստակեցնել, թէ որոնք են ԱԺ 1-ին ընթերցմամբ քննարկվող Նախագծի 11-րդ հոդվածով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			լրացվող 87.1-ին հոդվածի 4-րդ մասով աուդիտի հանձնաժողովի անդամների համար սահմանվող մասնագիտական գիտելիքները:		
8.		Առաջարկվում է փոփոխել օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետները	Առաջարկվում է փոփոխել օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետները հրապարակումից հետո 10 օրվա փոխարեն հաջորդ օրվանով, հաշվի առնելով ՀԲ-ի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի շրջանակներում բարեփոխման դիտարկման ժամկետը (մինչև մայիսի 1-ը):	Ընդունվել է:	Ընդունվել է:

9.		Նախագծերի փաթեթից հանել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը	Կենտրոնական բանկի հետ քննարկման արդյունքում առաջարկվել է Նախագծերի փաթեթից հանել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով յուրաքանչյուր անձի տվյալ դասի արժեթղթերի համար սահմանված 75 տոկոս շեմը, որի դեպքում նա պարտավոր է տվյալ դասի բոլոր արժեթղթերն իրեն հանձնելու առաջարկ անել, փոխարինվում է 50 տոկոսով	Ընդունվել է:	Ընդունվել է:

10.	Լուսավոր Հայաստան խմբակցություն	Նախագծի 3-րդ հոդվածով որպես Օրենքին լրացում նախատեսվող 38.1-ին հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածով որպես Օրենքին լրացում նախատեսվող 38.1-ին հոդվածի 4-րդ մասից հանել «Բաժնետիրական համաձայնագրի խախտմամբ կնքված գործարքը կարող է շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա դատարանի կողմից ճանաչվել անվավեր միայն դեպքում, երբ ապացուցվի, որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ պետք է իմանար բաժնետիրական համաձայնագրով նախատեսված սահմանափակումների մասին:» նախադասությունը, քանի որ գործարքների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			անվավերությանը վերաբերող քաղաքացիական օրենսդրության սկզբունքային նորմերն ու վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներն արդեն իսկ կարգավորում են խնդրո առարկա իրավահարաբերությունը:		